ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Լ. Կ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Նիկողայոս Բունիաթյանը Հայաստան եկավ 20-ական թթ., երբ մեր երիտասարդ սովետական իշխանության հաղթանակից հետո իր վերածնունդն էր ապրում, երբ տեղի էր ունենում արմատական բեկում դաղափարախոսության, մշակույթի, գիտակցության և կենցաղի մեջ։ Նորարարության ձգտումը նկատվում էր կյանքի բոլոր ասպարեզներում։ Այդ տարիների իրադրությունը ծնում էր նոր արվեստ և ճարտարապետություն, որոնք ազատ զարգացման լայն հնարավորություններ էին ստացել։

20-ական թթ. Հայաստանում նշանավորվեցին հեղափոխական գաղափարախոսության բարձր վերելքով, և որպես արդյունք՝ հիմք դրվեց հայկական սովետական արվեստին, ծնվեցին գեղարվեստական նոր ավանդույթներ։

Այս դժվար ու պատվավոր խնդրի լուծումն ընկավ սովետահայ մշակույթի գործիչների առաջին սերնդի վրա, որի ներկայացուցիչներն էին այնպիսի նշանավոր ճարտարապետներ, երաժիշտներ, նկարիչներ, գրողներ, ինչպիսիք էին Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Թորամանյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Ռոմանոս Մելիքյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Եղիշե Չարենցը և շատ ուրիշներ։ Նրանցից ամեն մեկի ստեղծագործական ջանքերով, առանձին և համատեղ գործունեությամբ ստեղծվում էր Սովետական Հայաստանի նոր մշակույթը։ Նիկողայոս Բունիաթյանը հայկական նոր արվեստի զարգացման ակունքներին կանգնած այդ փայլուն համաստեղության էր պատկանում. նա այն ճարտարապետների շարքում էր, որոնք անում էին նոր ճարտարապետության առաջին քայլերը։ Նա մեծ հայրենասեր էր ու մեծ քաղաքացի, իր գործով միշտ ձգտում էր, որ իր ժողովրդի արվեստը ճանաչելի դառնա ողջ մարդկությանը։

Նիկողայոս Բունիաթյանը ծնվել է 1876 թ. (որոշ փաստաթղթերով՝ 1884 թ.) Թիֆլիսում։ Արվեստի և ճարտարապետության ուսումնառությունն սկսել է Օդեսայի գեղարվեստական ուսումնարանում, որն ավարտելուց հետո մեկնում է Պետերբուրգ՝ սովորելու Գեղարվեստից ակադեմիայում։ Գերազանց ավարտելով ակադեմիան, 1914 թ. ստանում է ճարտարապետ-նկարչի կոչում և անմիջապես ընդգրկվում պետերբուրգյան, ապա նաև մոսկովյան ճարտարապետական կյանքի մեջ։ Նա Մոսկվայի առաջին համամիութենական գյուղատնտեսական և ճյուղային արդյունաբերության ցուցահանդեսի մի շարք տաղավարների նախագծողն ու կառուցողն էր։ Դրանցից ամենաչքի ընկնողը Հայկական ՍՍՀ տաղավարն էր։ Աշխատել է որպես Մոսկվա-Կազան երկաթուղու վարչության ճարտարապետ։ Նույն երկաթուղու մերձմոսկովյան Կրատովո կայարանի մոտ Ա. Թամանյանի և Վ. Սեմյոնովի նախագծած «Հոբելյանական» ավանի շինարարության ժամանակ Թամանյանը Բունիաթյանին հրավիրում է այդ շինարարությունը ղեկավարելու։ Այդպիսով Բունիաթյանը առաջին անգամ դարձավ Թամանյանի քաղաքաշինական գաղափարների իրականացման անմիջական մասնակիցը։ Համատեղ աշխատանքի այս փորձը հետագայում վերաճեց երկու վարպետների ստեղծագործական խորը փոխըմբռնման և մեծապես նպաստեց նրանց աշխատանքին՝ Երևանի գլխավոր հատակագիծը իրականացնելու ընթացքում։

1924 թ. Հայաստանի կառավարության հրավերով Բունիաթյանը ստանձնեց Երևանի առաջին գլխավոր ճարտարապետի պաշտոնը որը հմտորեն վարեց մինչև 1938 թ.։ Դա բարդ ու պատասխանատու խնդիր էր, որի համար անհրաժեշտ էր ունենալ ժամանակակից քաղաքաշինական հարցերի խոր իմացություն, շինարարական մեծ փորձ։ Բունիաթյանի քաղաքաշինական գործունեության արժեքավոր հատկանիշներից մեկն էլ այն էր, որ քաղաքի շինարարության ժամանակ ճարտարապետը բացառիկ խնամքով էր մոտենում պատմական հուշարձաններին։ Նա գնահատում, պահպանում և ուսումնասիրում էր Երևանի մշակութային արժեքները։ Այդ տեսակետից հիշարժան են Բունիաթյանի մի շարք ուսումնասիրությունները՝ «Հին Երևանը Իրանի իշխանության դարաշրջանում», «Հայաստանի ժողովրդական տների մի քանի տիպեր» և «Շահար մզկիթի վերանորոգումը»։ Բունիաթյանը խորապես գգում էր XIX դարի կեսերի և XX դարի սկզբի երևանյան ճարտարապետության յուրահատկությունները և քաղաքը նախագծելիս ու կառուցելիս հաշվի էր առնում նրա կառուցապատման բնույթն ու կոլորիտը։ Բունիաթյանի կողմից ժամանակակից քաղաքաշինական պրոբլեմների լայն ըմբռնման և այդ պրոբլեմների լուծման գործնական վարպետության պերճախոս վկաները նրա կառույցներն են, որոնք աչքի են ընկնում ծավալային փայլուն լուծումներով, անսամբլային մտածելակերպով և հանրապետությունում մեծ շինարարության սկիզբը ավետեցին։ Դրանցից էին մեկ հարկանի տները Նալբանդյան փողոցում՝ կառուցված առանձին ընտանիքների համար, որոնք այդպես էլ կոչվում էին՝ «Իրավաբան Զուբարի տուն», «Բժիշկ Հակոբյանի տուն», այնուհետև առաջին՝ Շահումյանի անվան դպրոցը, առաջին կրկեսը՝ 800 հանդիսատեսի համար (փայտյա կառույց այժմյանի տեղում), առաջին՝ «Ինտուրիստ» հյուրանոցը և այլն։ Այդպես մոտ 80 մեծ ու փոքր կառույցներ, որ Բունիաթյանի նախագծերով իրականացված են Երևանում և հանրապետության այլ վայրերում։

Ն. Բունիաթյանը մեծ ընդգրկումների ճարտարապետ էր, նախագծող, հետազոտող, ուսուցիչ, արվեստագետ, հասարակական գործիչ։ Նա հայրենիք եկավ, երբ երիտասարդ հանրապետությունը մասնագետների խիստ կարիք ուներ։ Բունիաթյանը գլխավորեց ոչ միայն Երևանի կառուցապատումը, այլև կադրերի պատրաստման գործը։ Մոսկվայի բարձրագույն գեղարվեստա-տեխնիկական արվեստանոցում (ВХУТЕМАС) և պոլիտեխնիկ ինստիտուտում 1917—1925 թթ. նրա աշխատանքի փորձը նպաստեց հանրապետությունում ճարտարապետական ուսման գործը կազմակերպելուն։ Նա Երևանի համալսարանի ճարտարապետական բաժնի հիմնադիրը հանդիսացավ, 1924 թ. մինչև 1938 թ. դասավանդում էր այդտեղ, վարելով նաև ճարտարապետության ամբիոնի վարիչի պաշտոնը։ Սովետական Հայաստանի ճարտարապետների առաջին սերունդը՝ Բունիաթյանի սաները, միաժամանակ աշխատում էին Երևանի քաղխորհրդի ճարտարապետական-հատակագծային արվեստանոցում, որը նույնպես կազմակերպել ու ղեկավարում էր Բունիաթյանը։ Այստեղ ուսանողները պրակտիկ գործունեության հնարավորություն ունեին։ Հետագայում նրանցից շատերը դարձան Սովետական Հայաստանի առաջատար ճարտարապետներ։

Ճարտարապետի ստեղծագործական ուղին բարդ էր։ Վաղ շրջանում նա հետևում էր ռուսական կլասիկայի ոճին։ Երևանի մի շարք բնակելի տներ կրում են այդ ազդեցությունը։ Իրենց ճարտարապետությամբ հետաքրքիր են Նալբանդյան և Թումանյան փողոցների հատման անկյուններում գտնվող երկու միատեսակ տները։ Հատակագծային ներս ընկած կորագիծ հնարավորություն է ընձեռել տների դիմաց կազմակերպելու փոքրիկ պուրակներ, որոնցով տները մասամբ մեկուսացվել են խաչմերուկի աղմուկից։ Կառույցներն աչքի են ընկնում իրենց կենսուրախությամբ, արտահայտչականությամբ, օրգանապես ներգծվել են շրջապատի կառուցապատմանը և այսօր էլ շահեկանորեն առանձնանում են իրենց ճարտարապետական լուծումով։

Ռուսական ճարտարապետության ոճով էր կառուցված Հայաստանի

առաջին տաղավարը Մոսկվայի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում (1922 թ.)։ Հետագայում, Երևանում «Ինտուրիստ» հյուրանոցի ճակատներն ու ինտերյերները մշակելիս, Բունիաթյանը օգտվել է դասական ճարտարապետության ձևերից։ Լինելով դասական ճարտարապետության դպրոցի՝ պետերբուրգյան Գեղարվեստից ակադեմիայի սանր, Բունիաթյանը չէր կարող լրիվ հեռանալ այդ դպրոցի ավանդույթներից, բայց դրա հետ մեկտեղ նա փնտրում էր գեղարվեստաճարտարապետական արտահայտչականության նոր ձևեր, որոնք համահնչուն լինեին նոր դարաշրջանին։ Նա կարծում էր, որ հայկական պատմական ճարտարապետության հարուստ ժառանգությունը կարող է ամուր հիմք լինել նոր ճարտարապետական ուղղության համար։ Երևանի Շահումյանի հրապարակում գյուղբանկի շենքը կառուցելիս Բունիաթյանը փորձեց օգտագործել հայկական միջնադարի ճարտարապետությունը։

20-ական թթ. դեռևս չկար հստակ պատկերացում, թե ինչպե՞ս, ի՞նչ ուղղությամբ պետք է զարգանար մեր ճարտարապետությունը։ Մասնագետներից ամեն մեկը յուրովի որոնում և մշակում էր իր սեփական ստեղծագործական կոնցեպցիան։ 20-ական թթ. վերջում հայկական ճարտարապետության մեջ նոր հոսանք երևաց՝ ի դեմս Հայաստանի պրոլետար ճարտարապետների կազմակերպության, որն իր հիմքում ուներ մեր դարի ռացիոնալիստական ճարտարապետության ըմկզբունքները և ռուսական կոնստրուկտիվիզմի պրոգրեսիվ շատ դրույթները։ Այս կազմակերպության առաջատարներն էին ճարտարապետներ Կարո Հակոբյանը, Միքայել Մաղմանյանը, Գեորգ Քոչարը։ Նրանք հանդես էին գալիս հանուն նոր ճարտարապետության զարգացման ու ստանդարտիզացիայի, հանուն շինարարական նոր կոնստրուկցիաների ու նյութերի և այլն։ Ն. Բունիաթյանն, իհարկե, զգում էր ճարտարապետական նոր ոճ ստեղծելու անհրաժեշտությունը և ժամանակի կոյություն ունեցող ճարտարապետության մեջ արդեն տեսնում էր նորի սաղմերը։

«Ժամանակակից ճարտարապետության ոճը և հայկական կերպարվեստը» հոդվածում Ն. Բունիաթյանը գրել է. «... Ճարտարապետությունը սկսել է ձեռք բերել մի շարք իրահատուկ այնպիսի նոր գծեր, որոնք ժամանակի ընթացքում կարող են ստանալ ոճի էլեմենտներ, այսինքն տեխնիկական պրիոմներ և կառուցման ձևերի հարմոնիկ ու ռացիոնալ զուգակցում։ Այդ բոլոր ուղղությունները, անկախ նրանից, որ մենք կկոչենք նրանց կուբիզմ թե կոնստրուկտիվիզմ, դեռ չեն ստեղծել, բայց անկասկած, ստեղծում են մեր ժամանակաշրջանի ոճը։ Նոր ոճի լոզունգն է՝ կոնստրուկցիայի և նյութերի ռացիոնալ օգտագործումը։ Մնացյալը պիտի լրացնեն նյութի տեսակները և տվյալ միջավայրի կլիմայական, աշխարհագրական և ազգագրական առանձնահատկությունները»[1]։ Այնուհետև Բունիաթյանը եզրակացնում է, որ «ոճը ստեղծվում է կոլեկտիվ կառուցումներով։ Ամեն մի երկիր, ամեն մի ժողո-

[1] «Արվեստ», 1926, № 1—2։

վուրդ պետք է մտցնի իր ստեղծագործական աշխատանքի բաժինը համաշխարհային ճարտարապետության ընդհանուր օրգանիզմի մեջ։ Ապագան ցույց կտա, թե վերոհիշյալ մատնանշված ուղղությունը, որ բխում է և էպոխայի տնտեսական հանգամանքներից, որքան առաջ կբերի ճարտարապետներնորոգողներին, որոնք կստեղծեն մոռացված տրադիցիան և նմշակեն նոր սեփական էսթետիկան»[2]։

20-ական թվականների վերջերին Բունիաթյանը համոզված անցավ ռացիոնալիստական ճարտարապետության։ Այդ թվականներին կառուցած շեն-

Դյուլբանդի շենքը Ստ. Շահումյանի անվան հրապարակում

քերը՝ բնակելի տներ Լենինի պողոտայում, «Ինտերնացիոնալ» և քաղխորհրդի բնակելի տներ Լենինի պողոտայի և Թումանյանի փողոցի խաչմերուկում, «Սևան» հյուրանոցը Շահումյանի հրապարակում, խոսում են Բունիաթյանի հակման մասին դեպի նոր ճարտարապետական ուղղություններ։ Հատկապես բնորոշ է Երևանում, Մարքսի փողոցում գտնվող բաղնիք-լողավազանի ճարտարապետությունը։ Բաղնիքի նախագծի վրա աշխատելիս Բունիաթյանն այստեղ մտցրեց նոր բովանդակություն՝ լողավազան. այսպիսի մոտեցումը նկատելի է այդ տարիների նման տիպի շինություններում. հիմնական ֆունկցիայից բացի, բաղնիքները պետք է դառնային սպորտային և առողջապահական միջոցառումների վայր։ Հետաքրքիր են կառույցի համաչափությունները, ծավալների հարաբերակցությունը, ծածկերի յուրահատուկ ուրվագիծը, որոնք հատուկ են ճարտարապետության կոնստրուկտիվիստական դպրոցին։ Այս ամենը ավելի ցայտուն երևում է շենքի մակետի վրա։ Նախագիծը իրականացնելիս նրա ճարտարապետության շատ նախնական մտահղացումներ կորսվեցին։ Նույնը տեղի ունեցավ Ազիզբեկովի հրապարակում հրշեջ կայանի շենքը կառուցելիս։

Լենինի պողոտայի կառուցապատման մեջ իրենց ուրույն զերն են կատարում քաղխորհրդի երեք միատիպ բնակելի տները (կոչում էին «բնակելի կոմբինատ»), որոնք գտնվում են Սպանդարյան, Ամիրյան և Մարքսի փողոցների հատվածում։ Այստեղ ճարտարապետը իր առջև դրել էր ոչ միայն գեղարվեստահատակագծային, այլև կենցաղասոցիալական խնդիրներ։ Հաշվի

2 Նույն տեղում։

առնելով բնակիչների պահանջները, նախատեսված էին կուլտուր-կենցաղային ծառայություններ, առաջին հարկերը տրամադրված էին խանութներին։ Այս շենքերի քաղաքաշինական դերը ակնհայտ է՝ նրանք աջակցում են պողոտայի կառուցապատման բնույթի և որոշակի մասշտաբի պահպանմանը, ստեղծում են յուրահատուկ ճարտարապետական միջավայր։ Ամիրյան փողոցի և պողոտայի հատման անկյունում գտնվող երկու շենքերը միմյանց հետ կապված են բարձր կամարով, որը Բունիաթյանը նախատեսել էր այն նպատակով, որպեսզի պողոտայից տեսանելի լինի խորության մեջ գտնվող միջնադարյան հուշարձանը՝ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին. ևս մեկ վկայություն, թե ինչպիսի սիրով էր Բունիաթյանը վերաբերվում հին Երևանի ճարտարապետական ժառանգությանը, ինչքան բարձր էր գնահատում այդ ժառանգության գեղարվեստական ներգործության դերը՝ նորը ստեղծելիս։

«Ինտուրիստ» հյուրանոցը Արովյան փողոցի վրա

Ն. Բունիաթյանի ստեղծագործությունները, որոնք կատարված են նուրբ քաղաքաշինարարի զգացողությամբ, ճարտարապետական մեծ տակտով և պրոֆեսիոնալ խորը կուլտուրայով, օրգանապես մտել են Երևանի կառուցապատման մեջ և այդ կարգի մյուս շինարարությունների հետ միասին դարձել քաղաքի 20—30-ական թթ. ճարտարապետական կերպարի կրողները։ Այսօր դժվար է պատկերացնել Երևանն առանց Նիկողայոս Բունիաթյանի շենքերի։

Անվանի ճարտարապետի ստեղծագործական կենսագրության մեջ մեծ տեղ է գրավում պատմական հուշարձանների հետազոտությունը։ Ռուսական հյուսիսի հուշարձանների նրա ուսումնասիրություններն ու չափագրությունները, որ կատարել է 1911—1912 թթ. Գեղարվեստից ակադեմիայի և Պետերբուրգի հնագիտական հանձնաժողովի առաջարկով, ժամանակին բարձր գնահատվեցին ճարտարապետական հասարակայնության կողմից։ Բունիաթյանը ուսումնասիրել է Նովո-Լադոժսկայա գավառի XV—XVIII դդ. փայտի և քարի ճարտարապետության հուշարձանները՝ Տրոիցկայա եկեղեցին Պոմյա-

լովո գյուղում, Վոզդվիժենսկայա եկեղեցին Շիժնեմում, Պողոս-Պետրոս եկեղեցին Լիգովո գյուղում, Գոստինոպոլի տաճարը և այլն։ Մեծ արժեք են ներկայացնում ռուսական բարոկկոյի հուշարձանի, Մոսկվայի Մենշիկովյան աշտարակի չափագրությունները, որի նյութերը մասամբ տպագրվեցին[3]։

Ուսումնասիրելով ռուսական ճարտարապետությունը, Բունիաթյանը խորապես ծանոթացավ նրա առանձնահատկություններին, որը հետագայում արտահայտվեց նրա գործնական աշխատանքներում՝ Ռուսաստանում և Հայաստանում բնակելի և հասարակական շենքեր նախագծելիս։

Հայկական հուշարձանների ուսումնասիրությամբ Ն. Բունիաթյանը զբաղվեց սկսած 1914 թ. (երբ ակադեմիկոս Ն. Մառը նրան հրավիրեց մասնակցելու Շիրակի շրջանում կատարվող գիտարշավին) մինչև իր կյանքի վերջը՝ 1943 թ.։ Ն. Մառի պեղումները հիմնականում կատարվում էին Անիի շրջակայքում. Բունիաթյանն այստեղ արեց մի շարք չափագրումներ, ուսումնասիրություններ՝ Երերույքի բազիլիկա, Արուղամբենց եկեղեցի, Շիրակավանի տաճար, որոնք այսօր հատկապես մեծ արժեք են ներկայացնում նաև այն պատճառով, որ դարձել են միակ փաստաթղթերը այդ հուշարձանների մասին։ Անիի պալատական եկեղեցու Բունիաթյանի չափագրությունները հրատարակվեցին Ն. Մառի խմբագրությամբ և նախաբանով (1914 թ.)։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո կուսակցությունը և կառավարությունը հատուկ ուշադրության առարկա դարձրին պատմական հուշարձանների հետազոտման և պահպանման գործը. կազմակերպվեց հնությունների պահպանման ընկերություն։ Հայաստանի բոլոր ճարտարապետները ակտիվորեն ներգրավվեցին այս գործին, ուսումնասիրելով և լրիվ ոչնչացումից փրկելով շատ հուշարձաններ։ Այդ ժամանակից սկսած Հայաստանի պատմական հուշարձանների ուսումնասիրությունը ընդունեց սիստեմատիկ և գիտական բնույթ։ Դրանում մեծ էր գիտնական-ճարտարապետ, հնագետ Թորոս Թորամանյանի դերը։ Ն. Բունիաթյանը բարձր էր գնահատում Թ. Թորամանյանի ստեղծագործական ներդրումը ճարտարապետության գիտության ասպարեզում և գիտնականի մահվան օրերին գրած հոդվածում ցույց էր տալիս Թորամանյանի դերը հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործում։ Հոդվածում Բունիաթյանը նշում էր, որ Թորամանյանը առաջինը բացահայտեց հին վարպետների աշխատանքի մեթոդը, ուսումնասիրեց ու հայտնաբերեց հայ ճարտարապետության մեջ ոճի ժառանգորդականությունը։ Մինչև Թորամանյանի աշխատությունները, գիտական աշխարհը քիչ էր տեղյակ մեր ճարտարապետության զարգացման առանձնահատկություններին, և գիտնականի աշխատությունները հայկական ճարտարապետության յուրահատուկ հայտնությունները դարձան։ Ն. Մառի արտահայտությամբ «հայկական ճարտարապետության հուշարձանների լեզվի մեր առաջին ուսուցիչ» Թորամանյանը մեծ ազդեցություն ունեցավ Հայաստանի պատմական ճարտարապետության ուսումնասիրման վրա։ Ն. Բունիաթյանը դարձավ նրա առաջին հետևողներից։ Նա գիտակցում էր հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը և գտնում էր, որ Հայաստանի ճարտարապետությունը դարեր շարունակ մոռացված է եղել, քիչ է ուսումնասիրվել, և ընդհանրապես հայկական արվեստի պատմությունը քիչ է հայտնի լայն մասսաներին, իսկ արևմտաևրոպական ուսումնասիրությունները կատարված են առանց հաշվի առնելու պատմական ոճալ իրադրությունները, բնական միջավայրից անջատ, կարծես Արևելքում Հայաստանը մենակ էր և մեկուսացված։ Մինչդեռ, հայկական ճարտարապետության ակնառու առանձնահատկությունները՝ ձևի և բովանդակության ներդաշնակությունը, ծավալների հավասարակշռվածությունը, ճարտարապետական միջոցների, ձևերի հարստությունը կարող են դառնալ «ժամանակակից հայկական ճարտարապետության ոճի լողունգը»։ Իսկ նոր ոճի վերածնունդ

3 Տե՛ս Ежегодник императорского общества архитекторов-художников. Вып. 9. Спб., 1914, с. 25—28.

«կարելի է իրականացնել ժամանակակից կենցաղի հետ ներդաշնակ միացումով»[4], ասում էր Բունիաթյանը։

Իր հոդվածներից մեկում նա գրել է, որ հայկական արվեստի պատմությունը, և մասնավորապես ճարտարապետությունը, մինչև մեր օրերը շատերի համար հանդիսանում էր «փակ գիրք»։ Նա ոչ մի «տեղ ամբողջովին չի շարադրվել, բացառությամբ ընդհանուր պատմությունը լուսաբանող հնագիտական մի քանի ստեղծագործությունների և ակնարկների»[5]։

Հայկական արվեստի պատմության ամբողջական պատկերն ունենալու համար Բունիաթյանը առաջարկում էր ուսումնասիրել հնագույն դարաշրջան-

«Ինտերնացիոնալ» բնակելի շենք

ները, հետազոտել կործանված և հողին հավասարեցրած հայոց քաղաքները՝ Արմավիրը, Արտաշատը, հին Վաղարշապատն ու Դվինը, որպեսզի բացահայտվեն նոր պատմական էջեր։ Նա գտնում էր, որ հետագա սիստեմատիկ ուսումնասիրություններում անհրաժեշտ է թափանցել մինչև Հայաստանի կուլտուր-պատմական հեռուների խորքերը՝ բացահայտելով նրա նյութական հուշարձանները և ճարտարապետության զարգացման հիմնական օրինաչափությունը։ Այս նպատակով Բունիաթյանը ընդլայնեց հետազոտությունների իր ժամանակագրական սահմանները։ Նա ուսումնասիրում է հելլենիստական շրջանի հուշարձան Գառնիի տաճարը, վերլուծում է հունա-հռոմեական ազդեցությունը նրա ճարտարապետության վրա։ Բունիաթյանը մանրամասն նկարագրել և չափագրել է հուշարձանը իր բոլոր մանրամասներով։ Նա առաջինը սկսեց Գառնիի տաճարի վերանորոգման աշխատանքները, հրա-

---

4 Նիկողայոս Բունիաթյան. Ժամանակակից ճարտարապետության ոճը և հայկական կերպարվեստը.—«Արվեստ», 1936, № 1—2։

5 Հռոմեական ճարտարապետության ազդեցությունը հայկականի վրա. ձեռագիր. Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ։

տարակեց մենագրություն և մի շարք հոդվածներ այդ հուշարձանի վերաբերյալ։

Ն. Բունիաթյանը ձեռնարկեց «Հայաստանի ճարտարապետության պատմություն» աշխատությունը գրելու գործը, բայց, ցավոք, աշխատանքը մնաց անավարտ։ Ճարտարապետի գիտական բնույթի ժառանգությունը դեռևս լրիվ ուսումնասիրված չէ։ Բունիաթյանի նախագծերով իրագործված ստեղծագործությունները դարձել են այսօրվա Երևանի անբաժանելի մասը և դրանցով մենք պատկերացում ենք կազմում հայկական սոցիալիստական ճարտարապետության նոր շրջանի մասին։

Այսօրվա ելակետից դիտելով 20-ական թթ. վարպետների գործունեությունը, ավելի ու ավելի է արժեքավորվում նրանց ստեղծագործական ներդրումը Սովետական Հայաստանի ճարտարապետության մեջ։ Այդ արժեքները ստեղծած վարպետների շարքում պատվավոր տեղերից մեկը պատկանում է Նիկողայոս Բունիաթյանին։

АРХИТЕКТОР НИКОЛАЙ БУНИАТЯН

Л. К. ДОЛУХАНЯН

Резюме

Николай Гаврилович Буниатян (1878—1943)—архитектор, исследователь, педагог, общественный деятель, принадлежал к тому поколению деятелей литературы, искусства и архитектуры, которые стояли у истоков развития национальной культуры Советской Армении. Вместе с А. И. Таманяном и другими представителями старшего поколения архитекторов он открывал пути развития новой зодческой школы Армении. Н. Буниатян приехал в Ереван в 1924 г. по приглашению правительства Армянской ССР на должность главного архитектора города. В руководство строительством нового Еревана он вложил все свои творческие силы, знания, опыт. Архитектором построено свыше 70 зданий в Ереване и других районах Армении. Построенные им первые жилые дома нового Еревана на ул. Налбандяна, гостиницы «Интурист» (ныне «Ереван») и «Севан», Сельхозбанк на площади им. Шаумяна отличаются большим мастерством, замечательным масштабным решением, высокой культурой исполнения. Разная по художественному воплощению образов, архитектура этих зданий свидетельствует об интересных поисках, сопутствовавших деятельности архитектора. Буниатян имеет большие заслуги в исследовании архитектурных памятников Армении. Его обмеры памятников в районе средневекового городища Ани остались уникальными документами, свидетельствующими о существовании этих памятников. Большое место в творческой биографии Буниатяна занимает исследование, обмеры и первая раставрация храма Гарни. Значение творческого вклада Буниатяна в архитектуру Советской Армении неоценимо.